ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ Արարատի մարզ. Գ.Արբաթ (093) 90 98 99

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2014 թվական N 16

<<ԱՐԲԱԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Արայիկ Պետրոսյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով ***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝***

1. <<Արբաթի Բժշկական Ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես Արբաթ համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Արբաթ համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝

դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Արբաթ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:
5. Հաստատել՝
   ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:
   բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:
6. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:
7. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արբաթ համայնքի ղեկավարին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավագանու անդամներ

ՔՅԱՐԱՄ ԱՄԻՐՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԱՐԻԿ ԴՈԼՄԱԶՅԱՆ

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ Արարատի մարզ. Գ.Արբաթ (093) 90 98 99

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2014 թվական N 17-Ն

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10.07.2014 Թ N14 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Արայիկ Պետրոսյան/

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և << Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

Կատարել փոփոխություն Արբաթ համայնքի ավագանու 10.07.2014թ <<Արբաթ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և երաժշտական դպրոցի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 14-Ն որոման Երաժշտական դպրոց՝ շվիի դասատու տողում <<66500>> թիվը փոխարինել <<70822>>թվով, տեսականի դասատու տողում <<66500>> թիվը փոխարինել <<70822>>թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավագանու անդամներ

ՔՅԱՐԱՄ ԱՄԻՐՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԱՐԻԿ ԴՈԼՄԱԶՅԱՆ

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԳԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ